ՈՒՍԱՆՈՂԻ ձայն

Հ.Յ.Դ.
1990

ՀԱՄԱՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2008
ԹԻՎ 2 (21)

2790

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ՝

ԲՈՒՀ - 80 տոկոսով կոռումպացված մի հաստատություն՝ իր թերի կրթական համակարգով

www.одноглазники.մուկ

ԱՍՔ ՄԻՇՈՅԻ, ՇՊՌՕՏԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Մտածումներ ֆուտբոլի, նացիստների, ծամոնի և ուսխորհուրդների մասին

Սպորտը կյանքի այն բնագավառն է, որտեղ մարզիկը ստանում է ֆիզիկական, հոգեկան, էսթետիկական և մտավոր գոհունակություն: Խաղալիս հաղթանակի անհագուրդ տե'նչն է միայն զբաղեցնում մարզիկի մտահորիզոնը: Նրանք սովորաբար աշխատում են «սպորտային ոգի ցուցաբերել հրապարակում՝ զերծ մնալով ատելությունից և փորձելով «վայելել ու արվեստ դարձնել խաղը: Բոլորս անհամբեր սպասում էինք Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպմանը: Մեր հաղթանակը չկայացավ: Դա լոկ սպորտային իրադարձություն չէր, չնայած որ շատերը մարզադաշտ էին եկել «մաքուր խաղ դիտելու համար: Իսկ ֆուտբոլը միայն խաղ չէ: Ֆուտբոլը նախևառաջ հավաքական է՝ բառիս բուն և փոխաբերական իմաստներով: Երբ որևէ հավաքական խաղադաշտ է դուրս գալիս, հակառակորդի դարպասում հաջողության հասնելու նրա ամենակարևոր խթանը հաղթելու կամք դրսևորելու հավաքական կամեցողությունն ու վճռականությունն է: Հավաքականի անդամների անհատական փայլուն կարողությունները, մարզական բարձր վիճակը, տեխնիկական պատրաստվածությունը, սակայն, ի չիք են դարձնում անդամների հաղթելու ցանկությունը, եթե, օրինակ, մարզադաշտը պասիվ է, եթե կան արտաքնապես աննշան թվացող նրբություններ, որոնց անտեսումը մեծապես ազդում է խաղի վճռական ելքի վրա: Անկեղծության դեմ չմեղանչելու համար խոստովանեմ, որ մեր տղաների խաղը հաճելի չէր ոչ մեկիս: Երկրպագուները բնազդաբար ավելի ակտիվ էին քան երբևէ: Շատերը կպնդեն, թե մրցակիցը պարզապես ուժեղ էր (և իրապե'ս ուժեղ էր), և որ ինչքան էլ մեր ֆուտբոլիստները փորձեին ձերբազատվել դարավոր թշնամու կերպարը մարմնավորող մրցակցի հետ առաջին անգամ առերեսվելու բարդույթից, միևնույնն է, խաղը հոգեբանական մրցամարտ էր: Պատրվակներ են: Նույնիսկ ֆուտբոլային սիրողական գիտելիքներ ունեցողը կասեր, որ մերոնք չէին խաղում, չէին կարողանում խաղալ, կամ գուցե «պարզապես չստացվեց : «Ինչու՞ պիտի չխաղային հարցը պատասխան չունի: Հանդիպումը մեր և թուրքերի միջև էր. այնտեղ ավելի քան ֆուտբոլ էր...այնտեղ ազգային արժանապատվությունն էր խոսում: «Պարզապես չստացվեց -ը նույնպե 'ս չունի տրամաբանության հատիկ. մեր բոլոր պարտությունների մեղավորները կա'մ դատավորներն են, կա'մ էլ երկրպագուները... ամենադաժանը «չէին կարողանում խաղալ -ն է: Ես նույնպես արհեստավարժ ֆուտբոլիստ չեմ, բայց ինչպես շատերը, մեծացել եմ ֆուտբոլով և ակտիվորեն հետևում եմ մեր հավաքականի բոլոր խաղերին: Մարզիչ չեմ, որպեսզի դատեմ խաղի տակտիկան և հնարքների օգտագործման արդյունավետությունը, սակայն մի քանի նկատառում ունեմ, որին կհամաձայնեն շատերը: Մինչև խաղի մեկնարկը հնչեցին երկու հավաքական-ների ազգային օրհներգերը: Թուրք խաղացողներն անխտիր, (և դա նկատելի է իրենց բոլոր մրցամարտերում), մեկ անձի պես՝ սիգապանծ գամված էին իրենց տեղում և միասնաբար երգում էին իրենց օրհներգը: Ոչ մի ատելություն չունենալով ո'չ մի ազգի մարզիկի հանդեպ՝ այնուհանդերձ նախանձելի երևույթ է տեսնել թուրքին՝ դեպի հաղթանակ սլացող տրամադրությամբ, հենց ի'մ հողի վրա: Ինչ խոսք, նրանք մեղավոր չեն իրենց հաղթանակի՝ մեզ համար ոչ ցանկալի մղումներում: Ամենաապշեցուցիչը սակայն մեր տղաների պահվա'ծքն էր մինչև խաղի մեկնարկը: Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը, որը մեր պատիվն է, կենսաղբյուրը, պատմությունն ու դեպի փայլուն արևներ տանող ճանապարհը, մեր հայրենիքը...կարծեք ոչինչ նշանակեր մեր խաղացողների համար: Ո'չ մի խաղացողի շուրթերից չնշմարեցինք «Մեր հայրենիք -ը: Ում էլ տեսանք՝ կիսատ-պրատ, անհասկանալի ինչ որ բառեր էր արտաբերում: Մեր տղաները, ի տարբերություն թուրք մարզընկերների, օրհներգի հնչելու պահին ընդամենը զբաղված էին ծամոնները բերանում ման տալու անհարկի սովորությամբ, ծիծաղով ու թույլ կեցվածքով, կարծես մոռացած լինեին «Յառաջ նահատակ ցեղի անմահներ... հայտնի երգի բառերը: Օ~հ կներեք, եթե պետական օրհներգը չգիտեն, ինչի՞ մասին է խոսքը...: Անցնենք առաջ: Խաղացողները մերկ դուրս չեն գալիս խաղադաշտ, բայց մեր տղաները մերկ էին, մերկ էին նրանց թևերը, լերկ էր նրանց ոգին, նրանք կոտրված էին...իսկ ո՞վ էր կոտրել նրանց ու մեր՝ երկրպագուներիս ոգին...բոլորս գիտենք....նացիստները: Թող Հիտլերը չնեղանա, բայց մեր հավաքականի մարզաշապիկների վրայից Արարատ լեռան պատկերը հանողն ավելի քան Հիտլեր է, նա ոչ միայն թրատեց հավաքականության կամքը, այլև մեր ոգին, հպարտությունը, պարտության դեմ ունեցած մեր դարավոր անեծքը և էլի շատ բաներ: Քաղաքակա՞ն որոշում էր, թքա'ծ, ավելի ներկայանալի մարզազգես՞ստ էին պատրաստել, թքա'ծ, հաջորդ խաղին թող անեին, բայց ոչ թուրքի դեմ թևաթափ անեին մեզ, միջազգային ճնշման (թեև այնքան էլ հասկանալի չէ ինձ համար) ու քաղաքական մեղրամսի արդյու՞նք էր, երի'ցս թքած, մի' խաղացեք ֆուտբոլ, ոչինչ մի' արեք, մեզ մեր Արարատը վերադարձրեք, ֆաշիստնե'ր: Իսկ ու՞ր էր ուսանողությունը, ու՞ր էր նրա ձայնը, ու՞ր էին հեռուստաէկրանների «մանյակ ուսանողները, ուսխորհուրդների շեֆերն ու նրանց կրկեսային մանկլավիկները, ու՞ր էր ուսխորհուրդի նախագահի բամբ ու նախնադարյան պատերազմի շեփոր հիշեցնող ձայնը...չկար ու չկա, և, կարծում եմ, չի լինի: «Մեր

ուսխորհուրդները չեն զբաղվում քաղաքական միջոցառումներով ,- կասեր մի շեֆը, «բուհերը պետք է հեռու մնան քաղաքականությունից ,- կավելացներ մյուսը…իսկ ես կասեմ՝ բոլոր պետք է հեռու գնաք բուհերից: Մոռացա՞ք արդյոք նախընտրական շրջանները, երբ կյանքի վերջին հույսը կորցրած մուրացիկի նման մոտենում ու շողոքորթում եք թուլական ուսանողներին՝ ձեր աթոռների «գոյության իրավունքը» աղերսելու համար, մոռացա՞ք խղճուկ ու ինքնահաստատման կարիք ունեցող ուսանողների վրա ձեր բանեցրած ճնշումները, սպառնալիքները, հալածանքները, «պարգևած» ու «ստացած» տարատեսակ կաշառքները, մեծ ամբիոններից ձեր զիլ ձայնն ու ամպագոռգոռ ելույթները…երբ տեղը գա, լավ էլ հայրենասիրական պիեսներ եք բեմադրում, իսկ երբ ձեզ վերևից հրամայում են լռել, փուչ պղպջակներ եք ման գալիս՝ թաքնվելու: Հայրենասիրությու՞ն եք ուզում, հան'եք ձեր արդար խոսքը կաշկանդող փողկապները, դու'րս եկեք ձեր ինքնակամ բյուրոկրատական դերից, մի' ակտիվացեք միայն նախագահական ու խորհրդարանական ընտրություններում, մոբիլիզացրե'ք ուսանողությանը՝ հանուն մեր ազգային հավաքական շարունակականության գաղափարի, այլ ոչ հանուն ձեր կյանքը իմաստավորած երեսուն դահեկանի….

Ա. Գասպարյան

Կարծիքներ հայ-թուրքական հարաբերությունների մասին

Անկախ ամեն ինչից, շփումը թուրք ազգի հետ պարտադիր է: Մինչև երկու ազգերի մեջ պետական մակարդակով հարաբերություններ չստեղծվեն, սառույցը տեղից չի շարժվի: Ամեն անգամ, երբ որևէ ֆիլմ կամ հաղորդում եմ նայում ցեղասպանության թեմայով, ատելությամբ եմ լցվում թուրք ազգի հանդեպ: Բայց միևնույն ժամանակ հասկանում եմ, որ դա ոչ թե թուրք ժողովրդի ցանկությունն էր, այլ թուրքական կառավարության ծրագիրը: Ու գուցե հենց սրանով էլ պայմանավորվում է այն, որ ես չեմ ուզում ամեն թուրքի մեջ մարդասպան տեսնել: Եվ ի վերջո, ինչքան կարելի է ապրել կողք կողքի ու նման լուրջ խնդիր ունենալ: Ինչքան շատ սերունդների փոխանցվի այդ խնդիրը, այնքան ավելի դժվար է լինելու լուծում տալը: Հասկանում եմ, որ դժվար է երկու կողմերի համար էլ շահավետ որոշում կայացնելը: Անպայման փոխզիջումներ պիտի լինեն. միայն պահանջելով՝ ոչնչի չենք հասնի: Բայց դա չի նշանակում, որ պիտի մոռանանք պատմական ճշմարտությունը վերականգնելու մեր արդար նպատակը:

Գայանե Պապյան
(ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ)

Իմ կարծիքով՝ հայ-թուրքական հարաբերություններում մենք պետք է բարդ դիվանագիտական խաղ խաղանք: Ըստ իս՝ եթե մեր հարաբերությունները լարված լինեն, Ադրբեջանի հետ նոր պատերազի դեպքում Թուրքիան ուղղակի կերպով կխառնվի այդ պատերազմին: Կարծում եմ, որ այսօրվա դրությամբ մենք այնքան ուժեղ չենք, որ կարողանանք երկու ճակատի՝ Ադրբեջանի և Թուրքիայի հարցերը մեր ուզած ձևով լուծել: Այսօր ժամանակն աշխատում է մեր օգտին: Մենք պետք է սպասենք, որ կայանան Կոսովոյի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նախադեպերը: Վերջում կավելացնեմ, որ մեր նպատակը պետք է լինի Հայաստանի՝ որպես գերհզոր պետության կայացումը, որի ժամանակ բոլոր բարդ հարցերն ավելի հեշտությամբ կլուծվեն:

Մարտին Մովսիսյան (ԵՊՀ)

Հայ- թուրքական հարաբերություններում ՀՀ դիրքորոշումը պարզ է. Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատում ու սահմանի բացում, առանց որևէ նախապայմանի: Իսկ Ի՞նչ կա որ, քաղաքակիրթ աշխարհը հենց այդպես էլ մտածում է: Իրականում, սա կարգավորում չէ, կան ավելի նուրբ հարցեր, որոնց մոռացությունը հայ ժողովրդի համար լուրջ վտանգներով է լի, անգամ իսկ երկրի երեսից մեկընդմիշտ բնաջնջվելու սպառնալիքով: Մենք շատ հաճախ մոռանում ենք Թուրքիայի պանթուրքիստական գաղափարախոսությունը, որի վառ ապացույցներն են 1894-1896, 1905, 1915-1923 թվականները, մոռանում ենք Հայկական հարցի արդարացի լուծման մասին. շատ կարևոր է այն հանգամանքը, որ Հայկական հարցի համատեքստում, բացի Հայոց ցեղասպանության ճանաչումից և դատապարտումից, ամրագրված է նաև տարածքային պահանջատիրությունը, որը հիմա գրեթե չի հիշատակվում մեր կողմից: Իսկ ինչու՞: Հարցն առաջին հերթին բոլոր հայերին է վերաբերում: Պիտի չմոռանանք նաև, որ Արցախյան պատերազմում Ադրբեջանի գլխավոր դաշնակիցն ու բարեկամը Թուրքիան էր ու շարունակում է մնալ:

Հայկական կողմն ինքը պետք է հայ-թուրքական հակամարտությունը կարգավորելու նախապայմաններ ունենա: Թուրքիան պետք է դադարեցնի հայության և Հայաստանի դեմ տարվող տեղեկատվական քարոզչական պատերազմը, պետք է դադարեցնի իր ռազմական աջակցությունն Ադրբեջանին, պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը, դադարեցնի ոչնչացնել մեր մշակութային ժառանգությունը: Այդ ամենից հետո միայն սահմանի բացումը կծառայի Հայաստանի շահերին, այլ ոչ թե Թուրքիայի հակահայ նպատակներին:

Արշակ Ծառուկյան (ԵՊՀ ռադիոֆիզիկա)

Ես ուսանող եմ, սովորում եմ ԵՊՀ-ում ու երբևէ չեմ հասկացել, թե ինչու է մեր հասարակությունը, թողնելով առօրյա խնդիրները, ամբողջ ուժով և համառությամբ պայքարում՝ բարձրացնելով Հայկական հարցը միջազգային ամբիոններում: Ես կարևորում եմ միկրոհանրապետության ընտանիքի բարեկեցությունն ու նյութական շահը:

Ա.Ավետիսյան ԵՊՀ

Հայ-թուրքական հարաբերությունների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ գերադասելի է Հայաստանի պետական քաղաքականության առջև դնել թեկուզ փոքր, բայց լուծելի խնդիրներ, ոչ թե ցեղասպանության միջազգային ճանաչման նման (տարածքային կամ նյութական փոխհատուցման ակնկալիքով) ակնհայտ անիրականանալի նպատակներ: Հետևաբար այս հարցը պետք է հանվի մեր արտաքին քաղաքականության առաջնահերթությունների ցանկից ոչ միայն այն պատճառով, որ խոչընդոտում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, այլև ավելի շատ նրա համար, որ ժամանակի և ռեսուրսների անիմաստ վատնում է: Իսկ Թուրքիայի հանդեպ տարածքային հավակնություններ մենք կարող ենք ունենալ միայն գերտերություն դառնալու դեպքում, թեև այդ ժամանակ էլ ո՛չ իրավական կամ պատմական հիմնավորում պետք կլինի, ո՛չ էլ եղեռնի ճանաչում և դատապարտում զանազան կողմերից, այլ միայն բիրտ ուժ: Երկրորդ՝ քիչ հավանական է, որ Թուրքիան, առանց Ղարաբաղի հարցի լուծման, բացի սահմանները, ուստի մենք պետք է կենտրոնանանք այս հարցի լուծման շուրջ՝ ձգտելով փոխզիջումից ստանալ հնարավոր առավելագույնը, ինչին դժվար թե նպաստի ցանկացած ձևաչափի եռակողմ (Հայաստան-Թուրքիա-Ադրբեջան) բանակցությունը:

Հրայր Մանուկյան ՀՊՏՀ

ՈՒՄ ԵՆ հալածում

Եթե ձեզ թվում է, որ բացի հանրահայտ քաղբանտարկյալներից՝ Հովհանես Թումանյանի և Ալեքսանդր Սպենդիարյանի արձաններից, (ովքեր ներկա են եղել ընդդիմության համարյա բոլոր հանրահավաքներին՝ ընդ որում, միշտ աչքի են ընկել) ընդդիմադիր քաղաքական հայացքներ ունեցող այլ անձինք չե՞ն հետապնդվում իշխանությունների կողմից, ապա դուք, ցավոք սրտի, սխալվում եք:



Բայց ես ուզում եմ անդրադառնալ հալածվող ընդդիմադիր երիտասարդ ակտիվիստներին: Երիտասարդների և մասնավորապես, ուսանողների առավել աչքի ընկնող հալածանքները սկսվեցին 2007-ի հոկտեմբերին, երբ դաժան ծեծի ենթարկվեց Նարեկ Գալստյանը, նախագահական ընտրություններից հետո հետևեց «ՀԻՄԱ - ի ակտիվիստ Արսեն Խառատյանի ծեծը: Այդ դեպքերի մասին մենք բոլորս գիտենք, գիտենք նաև, թե ինչպես հունիսի 18-ին ուժային կառույցների կոպիտ գործողությունների հետևանքով խափանվեց՝ մի շարք կազմակերպությունների կողմից կազմակերպված «Ընդդիմադիր երիտասարդների կոնգրեսը , որին մասնակցելու համար եկել էին շուրջ 500 երիտասարդ: Այս դեպքերը չեն մնում մեր ուշադրությունից դուրս, բայց արդյո՞ք գիտեք, թէ քանի երիտասարդ է տուգանվել 50-ից 200 հազար դրամով՝ չարտոնված զանգվածային միջոցառմանը (Հյուսիսային պողոտայում զբոսանքի) մասնակցելու համար, կամ քանի երիտասարդ է իրենց գյուղերում, թաղերում քուչայական կարգերով ծեծվել քաղաքական հայացքների համար, կամ քանիսին են գործից, ԲՈՒՀ-ից հեռացրել, քանիսն են ապօրինաբար ոստիկանություն բերման ենթարկել ու այնտեղ ծեծել և այլն:

Ես փորձեցի մոտավորապես պարզել քաղաքական հայացքներից տուժած երիտասարդների թիվը, և դիմեցի մի հետաքրքիր միջոցի: Ես մի շարք ընդդիմադիր ընկերներիս հարցրեցի, թէ կհամաձայնվե՞ն իրենք հրապարակավ հայտնել իրենց ընդդիմադիր լինելու մասին, և ի զարմանս ինձ, մեծ մասը պատասխանեցին, թե «ասելը կասեն, բայց դրա համար իրենց հաստատ կամ դեկանատը, կամ ռեկտորատը, կամ գործատուն, կամ ոստիկանությունը ինչ-որ ձև կպատժի: Այսինքն, երիտասարդները համոզված են, որ Հայաստանում ընդդիմադիրները հալածվում են համարյա բոլոր պետական, և մի շարք մասնավոր կազմակերպություններում՝ դրանց տարբեր օղակներում: Եթե այս արդյունքներին գումարենք այն, որ մոտ 100 ուսանող չի կարող միաժամանակ սխալվել (իսկ ես մոտ այդքանի էի հարցրել), կարելի է գալ միայն մի եզրակացության՝ ոչ մի ընդդիմադիր երիտասարդ այսօր ապահովագրված չի իր քաղաքական հայացքների համար

հալածվելուց:

Բացի այդ, ես հիշեցի փետրվարի 26-ը, երբ գրեթե բոլոր պետական բուհերի ուսանողներին ոստիկանները չէին թողնում դուրս գալ իրենց մասնաշենքերից (գործի դնելով մահակները), վախենալով, թէ ուսանողները դասադուլ կանեն: Երբ մենք դիմում էինք դեկանատներին և ռեկտորատներին, ուսանողների իրավունքները պաշտպանելու խնդրանքով, մեզ մերժում էին, օրինակ, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալը ասաց. «Չեն թողում դուրս գաք, դուրս մի եկեք, ես ի՞նչ կապ ունեմ : Փաստացի խախտվեց մոտ 40 000 ուսանողի իրավունք, որի մասին ոչ մի դեկանի տեղակալ, դեկան, պրոռեկտոր կամ ռեկտոր չբարձրաձայնեց (եթե կան բացառություններ, թող ներեն ինձ):

Հ.Գ. Կարծում եմ, որ հեռու չի այն օրը, երբ հայ երիտասարդները անկախ իրենց քաղաքական հայացքներից միահամուռ կերպով կպայքարեն առանձին վերցված, ինչպես նա– բազմաթիվ երիտասարդների իրավունքների խախտումների դեմ:

Դանիել Իոննիայան

www.одноглазники.մուկ



Գործող անձիք

Գորշիկյաններ- մկնիկների ընտանիք (հայր մկնիկ, մայր մկնիկ, որդի մկնիկ, 3 ամսական մկնիկ)

Սերոբ Կույրաչքյան- մկների նոր առաջնորդ

Մուկուչ մուկ-Գորշիկյանների հարևան

Կատուների առաջնորդ

Տեսարան առաջին

(Բույն է մտնում որդի մկնիկը: Բնում նստած են հայրը, մայրը և 3 ամսական փոքրիկ մկնիկը օրորոցում)

Մայր մկնիկ – Ու՞ր էիր, որդի'ս, ո՞րտեղից ես գալիս:

Որդի մկնիկ- Միտինգից, մա'մ:

Մայր մկնիկ- Ի՞նչ միտինգ… և այդ միտինգի պատճառով բացակայել ես Մկնաստանի պետական համալսարանի ամենահեղինակավոր ֆակուլտետներից մեկի մկնային փիլիսոփայության դասախոսությունի՞ց:

Որդի մկնիկ- է՜ մայրիկս… մա՜մ, այդ փիլիսոփայություն կոչվող աղբով թող մարդիկ զբաղվեն, իսկ մեզ՝ մկներիս, պանիր է պետք: Քո Մկնաստանի պետական համալսարանն ինձ պանիր չի տալիս, իսկ միտինգի ընթացքում մեր նոր առաջնորդ Կույրաչքյան Սերոբը մեզ պանիր է բաժանում:

Հայր մկնիկ- Սպասի'ր, սպասի'ր, զավա'կս, այդ Կույրաչքյան առնետը մեր դարավոր թշնամի՝ կատուների ցեղի առաջնորդի դեսպանը չէ՞:

Որդի մկնիկ- է՜ ծերուկս, տարիքդ արդեն իրենն ասում է, ոչնչից տեղյակ չես: Մկներն ու կատուներն այլևս թշնամիներ չեն: Երեկ Կույրաչքյանը մայթեզրին (բորդյուրին) կանգնած հանդիսավոր հայտարարեց, որ մեր՝ մկներիս միակ փրկությունը կատուների հետ խաղաղ պայմաններում համագործակցելն է: Կատուների առաջնորդը մեզ կիլոներով պանիր է խոստացել:

Հայր մկնիկ- Հենց այնպե՞ս, որպես նվե՞ր:

Որդի մկնիկ- Չէ՜, դրա դիմաց կարող է իրենց վերցնեն այս շենքի նկուղից մինչև ցանկապատ եղած բաց տարածությունը, բայց դա դատարկ բան է: Մեզ՝ մկներիս ինչի՞ն է պետք դատարկ տարածությունը: Մենք մեր նկուղներում պանիրային տնտեսությունը կզարգացնենք, պետք լինի այդ գրողի տարած համալսարաններից մեկն էլ կփակենք, պանիրի պահեստ կդարձնենք, կուտենք, կբազմանանք:

Հայր մկնիկ- Չէ՜, որդի'ս, կկործանվի մեր Մկնաստանը: Մեր նախնիները ժամանակին այդ ցանկապատից այն կողմ ազատորեն վազվզել են, և նույնիսկ մի անգամ մեր մեծ նախնին դուրս եկավ երեք գեր կատուների դեմ: Ու՞ր էր այդ ժամանակ քո Սերոբ…(նրան ընդհատում է փոքրիկ երեք ամսական մկնիկը և քնի մեջ օրորոցից դուրս պարզելով բռունցք արած թաթիկը՝ ծվծվում է՝ Սե՜-լո՜բ ա՜-լա՜ջ-նո՜լդ: Բոլորը լիաթոք ծիծաղում են):

Տեսարան երկրորդ

(Նույն մկները, գալիս է Մուկուչ մուկը)

Մուկուչ- Ողջու'յն Գորշիկյաններ: Դե ի՞նչ, կարող եք հպարտանալ: Ձեր որդին իսկական առաջավոր հայացքների տեր մուկ է: Նա մասնակցում է Սերոբ Կույրաչքյանի միտինգներին: (Շրջվում է Գորշիկյան որդու կողմը) Մի լավ նորություն ունեմ, փոքրի'կ Գորշիկյան: Մկների թագավորը Մկնաստան է հրավիրել կատուների առաջնորդին (Գորշիկյանի փոքրիկ աչքերը փայլում են): Բայց մի խումբ խենթեր բողոքի ցույցեր են անում, ցուցանակներ են պատրաստում, սակայն ոչի՜նչ…դրանք մի քիչ կծվծվան, հետո կլռեն:

Հայր մկնիկ- է՜, Մուկուչ, այս ու՞ր ենք գլորվում:

Մուկուչ- Ինչու՞ ենք է~ գլորվում: (Սկսում են վիճել: «Սե՜-լո՜բ ա՜-լա՜ջ-նո՜լդ , - քնի մեջ ծվծվում է փոքրիկ մկնիկն ու պարզում է օրորոցից բռունցք արած թաթիկը: Բոլորը լիաթոք ծիծաղում են):

ՎԵՐՋ

Ն. Ծատուրյան

ԲՈՒՀ - 80 տոկոսով կոռումպացված մի հաստատություն՝ իր թերի կրթական համակարգով



Ուսանող-իր՝որպես ուսանողի իրավունքներից անտեղյակ, դեռ հոգեբանորեն աշակերտի կարգավիճակում գտնվող, չկողմնորոշված, դասախոսի կողմից հալածվող, իրավազուրկ արարած (50% -ով):

Դասախոս-իր հերթին ուսանողին հալածող, արհամարհող, որպես մարդկային էակ՝ իրենից ցածր դասող, որոշակի գիտական աստիճան ունեցող, իր կարծիքով վեհ գաղափարներ կրող անհատ (50%-ով):

Հենց այս կոռումպացված բուհերում էլ բազմաթիվ ընդարումներ են տեղի ունենում ինքնագոհ դասախոսի և իրավազուրկ արարածների միջև: Ներքոնշյալ դեպքը տեղի է ունեցել հայաստանյան բուհերից մեկում:

Տվյալ բուհում գոյություն ունի ուսանողի հարցերը լուծող, նրան բուհից հեռացնող, գերազանցիկին «զոռով երեք նշանակող (եթե, իհարկե, նախապես տվյալ սուբյեկտի համար հաստափոր ամբիոնի վարիչին չի ասել իր բազմաչարչար հարևան տիկին Վարդուշը կամ գումար չի առաջարկել պարոն Պավլեն) ուսանողների շրջանում սարսափ առաջացնող, ուսումնական գծով պրոռեկտոր- ամբիոնի վարիչ ունեցող ամբիոն: Հենց այս ամբիոնում աշխատում է վերը նշված դասախոսներին ոչնչով չգիջող, ամբիոնի վարիչին երկպագող, նրա բարօրության համար եկեղեցում մոմ վառող, նրան առավոտից մինչ ուշ երեկո ծառայող, սուրճ եփելու մեջ վարպետացած տիկին Ն.Հ.-ն: Այս տիկին Ն.Հ.-ն, մի հիասքանչ առավոտ մտքի փայլատակում ունենալով, որոշեց հեշտացնել իր ամբիոնի վարիչի ծանր բիզնեսը: Երկար մտորումների արդյունքում վճռեց բոլոր ուսանողների ընթացիկ գրավորները «0 նշանակել, (ակնկալելով ուսանողների ավելի ստվար բազմության բարեկամացնել տիկին Վարդուշի կամ պարոն Պավլեի հետ), իսկ պատճարաբանումը պետք է լիներ՝ «արտագրված է : Այս ենթադրությանը տիկինը եկել էր ուսանողի կողմից իբր թե հայոց լեզվի անհարկի կիրառման պատճառով (դու դեմոկրատիան գրել ես դիֆրակցիա իսկ էքսպանսիան օկուպացիա, իսկ դու ընդանրապես միախառնվելը գրել ես միառադվել): Մոտենում է խրախճանքի պահը. տիկին Ն.Հ.-ն, իր հիասքանչ ժպիտը դեմքին, այցի է գալիս իրավազուրկներին՝ հայտարարելով, թե «լսե'ք ընկերներ, այս ի՞նչ վիճակ է ձեզ մոտ, ընդամենը 2-3 հոգի է անցողիկ գնահատական ստացել. փաստորեն, իմ չարչարանքն ապարդյուն էր : Այս «թևավոր խոսքերն արտասանելուց հետո տիկին կարիճն անցնում է իր բիզնեսին, քանի որ նա բիզնես լեդի է: Դիմելով այդ քայլին՝ տիկինն անտեղյակ էր, որ տվյալ բուհում ուսանում է գիտակցաբար աշակերտական տարիքից դուրս եկած, կողմնորոշված, հաստատակամ, որոշ առումներով դասախոսին իրենից ցածր դասող, ուսանողի իրավունքներից լավատեղյակ, դեմոկրատական արժեքներով դաստիարակված շարքային ուսանող Ն.Ա.-ն : Լսելով իր «0 -ի լուրը տիկնոջ շուրթերից՝ շարքային Ն.Ա.-ն ոտքի է կանգնում և ընդվզելով՝ բացատրություն պահանջում.

-Ես ինքս եմ գրել իմ գրավորը և երբևէ կարիք չեմ զգացել դիմելու նման անհարիր միջոցների:

-Անունդ ասա:

-Ն.Ա.:

-Ա~, Ն.Ա., դու՝ թանկագինս, ես նույնիսկ ինձ մոտ նշել եմ, հիպոթեզը գրել ես ապաթեզ, սա ուղղակի խայտառակություն է. երկրորդ կուրսի ուսանող ես, նույնիսկ արտագրել չգիտես:

(Ի դեպ, խոսելիս Ն.Ա-ն ձայնը չի բարձրացնում, իսկ տիկնոջ մոտ հիստերիայի ախտանիշեր են նկատվում):

Նկատելով, որ այդպիսի մարդկանց հետ խոսելն ապարդյուն է՝ ուսանողը պահանջեց իրեն բանավոր հարցնել, և տիկինը համաձայնեց՝ հրավիրելով իրենց որջը: Ուսանողն այդպես էլ արեց: Հայտնվելով անբիոնում՝ նա նկատեց, որ հանձնաժողովը կազմված է միայն տիկին Ն.Հ.-ից և նմանօրինակ այլ խավարասերներից, սակայն պետք է նկատել, որ մյուս խավարասերն այն աստիճան թշնամաբար տրամադրված չէր Ն.Ա.-ի նկատմամբ, որչափ մագիլները դուրս ցցած տիկին Ն.Հ.-ն: Ն.Հ.-ն իր հարցերն արտաբերում էր բղավելով՝ ցանկանալով շփոթեցնել Ն.Ա.-ին, սակայն ուսանողը շարունակում էր հստակ պատասխանել նրա բոլոր հարցերին՝ ցուցաբերելով գերազանց իմացություն: Ավարտվեց հարցումը: Այդ հարցման ընթացքում ուսանողն իրեն զգում էր ինչպես մարտի դաշտում, և նրա համար արդեն միևնույն էր՝ գնահատականը կբարձրացնեն, թե ոչ: Նա ամեն գնով ուզում էր դուրս գալ այդ արջի բնից: Երբ խոսքը հասավ գնահատականի բարձրացմանը, տիկինը հայտնեց, որ չի պատրաստվում դիմել այդ քայլին՝ պատճառաբանելով, որ Ն.Ա.-ն ամբողջ լսարանի առջև կասկածի տակ է առել իր գնահատման մեթոդը և դրանով իսկ վիրավորել հարգարժան տիկնոջը: Սա դեռ վերջը չէ, նա այսքանով չբավարտվեց. ուսումնական տարվա ավարտին Ն.Ա.-ն երեք ստացավ, բայց այս անգամ չընդվզեց՝ ցանկություն չունենալով գործ ունենալ խավարասերների հետ: «Մի երեքը չի խանգարի . մտածեց նա: Հենց նույն այդ կարիճն ավելի դաժան վարվեց Ն.Ա.-ի ընկերների նկատմամբ՝ վերջիններիս հեռացնելով բուհից:

Հարց է ծագում՝ իսկ ինչպե՞ս էին իրականում սովորում այս ուսանողները... երեքի, չորսի, թե հինգի... որտե՞ղ է արդարությունը, և ինչու՞ հայ ուսանողը չի կարող պաշտպանել իր իրավունքները:

Ուսանողնե'ր, սկսե'ք ձեր ԲՈՒՀ-ից, ընդվզե'ք անարդարության դեմ, եղե'ք միահամուռ, և դուք, անշուշտ, կհասնեք արդյունքի:

ԲՈՒՀ. «ՏՎԵ'Ք ԻՆՁ 2 ՏԱՐԻ, ԵՎ ԵՍ ԿԽԱԲԵՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ-ՈՒՍԱՆՈՂԻՆ

Ցավալի իրողություն է, որ մեր բուհերը, իրենց ուսանողների իրավունքներին զորավիգ լինելու փոխարեն, հաճախ իրենք են դառնում այդ իրավունքները ոտնահարողներ: Կցանկանայինք ներկայացնել նմանօրինակ մի դեպք, երբ իրավախախտի դերում հանդես է եկել Խ. Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարանը, իսկ տուժածները նույն համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետում սովորող մի խումբ տղաներ են:

2004թ. ընդունվելով վերոհիշյալ ֆակուլտետի պատմության բաժինը՝ տղաները բուհի հետ ստորագրում են պայմանագիր, որում ուսման վարձը ուսումնական մեկ տարվա համար սահմանված էր 250 հզր դրամ: Այդտեղ նաև նշված էր, որ ուսանողի՝ զինծառայության մեկնելու և ապա վերադառնալու դեպքում ուսման վարձը փոփոխություն կրել չի կարող: 2005թ. տղաները գնում են բանակ, բայց 2007թ. զորացրվելուց հետո խորին զարմանքով պարզում են, որ բուհն իրենցից պահանջում է տարեկան վճարել ոչ թե 250, այլ 300 հզր դրամ, որովհետև այդ ընթացքում ուսման վարձը հետևյալ բաժնում ավելացել է 50 հզր դրամով: Ուսանողները վկայակոչում են երեք տարի առաջ կնքված պայմանագրերը, բայց համալսարանի ղեկավարությունը տեղեկացնում է, որ դրանք չեղյալ են հայտարարված: Փաստորեն, տեղի է ունեցել պայմանագրերի միակողմանի լուծարում, ինչը բացարձակ հակասում է իրավական նորմերին:



Տղաները սկսում են պայքարել իրենց իրավունքների վերականգնման համար, սակայն ապարդյուն: Որոշում են դիմել ՀՀ ԿԳ նախարարություն: Նախարարության իրավաբանը բացատրում է, որ բուհն իրավունք չունի նման կերպ վարվելու, սակայն ՀՊՄՀ ղեկավարությունը հայտարարում է. «Դա մեր ներքին գործն է. ինչպես կուզենք, այնպես էլ կվարվենք : Հարցը հատկապես սրվել է վերջին շրջանում: Բանն այն է, որ այս պատմությունն ավելի քան մեկ տարվա վաղեմություն ունի, և ուսման վարձը չվճարելու հետևանքով տղաները հայտնվել են համալսարանից հեռացման վտանգի տակ: Իսկ այս ամենի ավարտն ի՞նչ է լինելու: Բուհական ղեկավարության կարծիքով՝ թերևս այն, որ ուսանողներն ի վերջո կվճարեն ուսման՝ իրենց պահանջած վարձաչափը: Սակայն տղաները վճռական են ու չեն պատրաստվում հանձնվել…

Այս դեպքը կարող է մասնավոր թվալ: Բայց նման ոտնձգությունները բնորոշ են բոլոր բուհերին: Ուստի գիտակցենք մեր իրավունքներն ու կամայականություններ թույլ չտանք մեր նկատմամբ:

Մ. Կիրակոսյան

Ուսանողի նվազագույն սպառողական զամբյուղը (Մաս 1- Երևանաբնակ ուսանող)

Հայ ժողովուրդը դարեր, հազարամյակներ շարունակ միշտ էլ կարևորել է կրթությունը, և հայ ծնողը ոչինչ չի խնայել իր զավակին կրթության տալու համար: Անցել են նախկին ժամանակները, երբ պետությունն էր իր վրա վերցնում կրթության հետ կապված բոլոր ծախսերը, և ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ուսանող լինելը բավականին թանկ հաճույք է, հատկապես երբ ուսանողը սովորում է վճարովի ուսուցման համակարգում:

Այս հոդվածի նպատակը կայանում է նրանում, որ ևս մեկ անգամ հիշեցնենք ՀՀ Կառավարությանն այն աղաղակող փաստի մասին, որ այսօրվա մեր ուսանողը կարող է լինել բանիմաց, խելացի, իր ուժերով տեղափոխվել անվճար ուսուցման համակարգ, սակայն չկարողանա գալ համալսարան, գնել անհրաժեշտ գրքեր, տետրեր, գրենական պիտույքներ, պետության կողմից տրվող խղճուկ 5000 դրամ կրթաթոշակով, որը աներեր է, նրա վրա չի ազդում սղաճը…



Բնական հարց է ծագում մեզ՝ ուսանողներիս մոտ.

ինչպե՞ս կարող է նման սոցիալական դժվար պայմաններում ուսանողը կրթվել և բարձրագոչ հայտարարել, որ մեր ապագան բանիմաց երիտասարդությունն է, ինչպե՞ս է հնարավոր ունենալ գիտատար, ինովացիոն ճյուղերով զարգացած տնտեսություն, երբ գոյություն ունի հին ճշմարտություն՝ աղքատությունը ծնում է աղքատություն:

Բավականին դժվար է հարցումներ անցկացնել ուսանողական նվազագույն զամբյուղի վերաբերյալ, քանզի ուսանողներն իրենց բնորոշ ծայրահեղականությամբ կամ շատ ցածր էին գնահատում՝ համաձայնելով բավարարվել քչով, կամ չափից բարձր: Որպեսզի հարցումներն արժանահավատ լինեն, բերենք միջինացված տեսքի: Հարցումներն անց են կացվել միայն երևանցի ուսանողների շրջանակներում, և հաշվարկվել է այն գումարի մեծությունը, որն անհրաժեշտ է ուսանողին մեկ ամսվա ընթացքում: Ստորև ներկայացվում է.

հագուստ՝ 11500դրամ (կոշիկ1/6 մասը, վերնաշապիկ և այլն)

անձնական հիգենիայի պարագաներ՝ 1000 դրամ (անձեռնոցիկ, ատամի մածուկ և այլն)

սնունդ համալսարանում՝ 7500 դրամ (25օր*(200բուտերբրոտ+100ջուր))

տրանսպորտ՝ 3750 դրամ (25օր*2 գնալ գալ* (50մետրո + +100երթուղային տաքսի)/2)

տետր՝ 400 դրամ (4հատ*100դր)

գրիչ՝ 250 դրամ (5հատ*50դր)

գիրք՝ 4000 դրամ (1 հատ)

այլ գրենական պիտույքներ՝ 750 դրամ (քանոն, մատիտ, վատման և այլն)

պատճենահանում՝ 4500 դրամ (450էջ*10դր)

INTERNET՝ 800 դրամ (160րոպե*5դր), այս հաշվարկում հաշվի է առնվել այն փաստը, որ բուհերում ուսանողների համար գործում է անվճար INTERNET

բջջային հեռախոս՝ 2000 դրամ

մշակութային ծախսեր՝ 2000 դրամ (1 կինո՝ 500դր+1 թատրոն կամ համերգ՝ 1000դր +1 թանգարան՝500դր)

ժամանց՝ 4000 դրամ (սրճարան, ակումբ)

այլ ծախսեր՝ 5500 դրամ

Ընդամենը՝ 48 150 դրամ

Շարունակելի...

Ս. Պարսյան

ՀՊՏՀ-ի (ժող.) կուսակցականացված ուսխորհուրդը հոգեորսության կնքահայր է

Ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ Հայաստանի բուհերում գործում են ուսխորհուրդներ, որոնք կոչված են կազմակերպելու և կառավարելու (մեր պարագայում 25%) բուհական կյանքը: Սակայն առօրյա բուհական կյանքում բացահայտում ես, որ մեր ՈՒԽ-ները զբաղված են իրենց համար ավելի «վեհ գործով՝ համալրել կուսակցության շարքերը նորագիրներով: Հայ երիտասարդությունը պետք է լինի քաղաքականացված, բայց ոչ երբեք կուսակցականացված, եթե չենք ուզում վերադառնալ նախկին Խորհրդային միության կոմերիտմիություններին, որոնց մասին կարելի է պատկերացում կազմել՝ նայելով մեր օրերի ՈՒԽ-ներին:

Այսօրվա «մեր հերոսը ՀՊՏՀ-ի (ժող.) ՈՒԽ-ն է, որը Երևանի ամենակուսակցականացված ՈՒԽ-ներից մեկն է, որտեղ չես գտնի գեթ մեկ այլ կուսակցության ներկայացուցիչ, որը կանդամակցի ՈՒԽ-ին, էլ չեմ ասում՝ զբաղեցնի ֆակուլտետի կամ որևէ հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Իհարկե, կան բազմաթիվ անկուսակցականներ, ոչնչով չցանկանալով նսեմացնել նրանց, սևագործություն են անում ՈՒԽ-ում:

ՀՊՏՀ-ն ունի հինգ ֆակուլտետ, որոնց նախագահները «պատահմամբ նույն կուսակցության ներկայացուցիչներ են, գործում են բազմաթիվ հանձնաժողովներ, որոնց նախագահները նույնպես «պատահմամբ նույն կուսակցության ներկայացուցիչներ են: Սակայն արդարության դեմ չմեղանչելու համար նշեմ, որ մամուլի հանձնաժողովի նախագահը միակ անկուսակցական նախագահն է: Իհարկե, սա բարի կամքի դրսևորում չէ, այլ կուսակցական հարմար կադրի բացակայություն:



Սակայն ինչպես ՈՒԽ-ում, այնպես էլ ՈՒԽ-ի թերթում բացահայտ նկատվում է կուսակցականությունը, որը դրսևորվում է ժամանակ առ ժամանակ կուսակցական ոգի ունեցող հոդվածներով և նկարներով:

Իսկ ինչ վերաբերում է մեր կուսակցական նախագահներին, նրանց հետ ուղղակի խոսելիս կամ առավել ևս բանավիճելիս չես կարող պարզել, կռահել, թե որ կուսակցությանն են պատկանում, քանի որ մեկը մյուսին հակասող մտքեր են հայտնում կամ ընդհանրապես գաղափարազուրկ են: Եվ ի՜նչ զարմանք ես ապրում, երբ ՈՒԽ-ի ավանդական դարձած միջոցառումների ժամանակ նրանց կրծքերին տեսնում ես ոսկեգույն, փայլփլող կուսակցական զինանշանները, որոնք վերջապես փարատում են նրանց կուսակցական լինելու մտորումները:

Այդ նույն միջոցառումների ժամանակ ականատես ես լինում նրանց կողմից տարվող ուղղակի քարոզչությանը՝ իրենց կուսակցության համար: Ասվածս մերկապարանոց չլինելու համար բերեմ օրինակ. 2007թ. «ՈՒսԳարնան ժամանակ՝ ԱԺ-ի ընտրություններից առաջ, հաղորդավարուհին, չգիտես ինչու, շնորհակալություն է հայտնում կուսակցությանը՝ իրենց աջակցելու համար, չնայած այն հանգամանքին, որ այդ միջացառումը ֆինանսավորվում է ՀՊՏՀ-ի ռեկտորատի, այսինքն՝ բուհում սովորող ուսանողների կողմից:

Ինչու՞ այս հոդվածը գրվեց հենց այս ժամանակ. քանզի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին սկսում է ավադական դարձած առաջին կուրսեցիների հոգեորսությունը, երբ ֆակուլտետի նախագահները ոչինչ չարտահայտող դեմքերով մտնում են առաջին կուրսեցիների մոտ և հրավիրում՝ մասնակցելու ՈՒԽ-ի (բայց իրականում կուսակցության) աշխատանքներին: Ի պատասխան այդ հրավերի՝ բազմաթիվ առաջին կուրսեցիներ ընդգրկվում են ՈՒԽ-ի աշխատանքներում: Ավանդաբար ամենահարգի հանձնաժողովը ՈՒԽ-ում մշակույթի հանձնաժողովն է, որտեղից հիմնականում սկսում են իրենց քայլերթը կուսակցական նախագահները:

Իսկ ինչու՞ է առաջին կուրսեցին մտնում ՈՒԽ. բնականաբար այս հարցը չունի մեկ պատասխան, քանզի դրդապատճառները տարբեր են՝ ինքնադրսևորվել, ինքնահաստատվել, լավ ժամանակ անցկացնել, շրջապատ ձեռք բերել, կուսակցական կարիերա անել և այլն:

ՀՊՏՀ-ում կուսակցականացումը պարզունակ ձևով է տեղի ունենում՝ շռայլ խոստումներ, «բաց դռներ , ջերմ վերաբերմունք, դասախոսներին բարեխոսում, ամառային ճամբարի անվճար տոմս, թռչնահավաքներին մասնակցելու իրավունք: Շատ հաճախ կուսակցականացվում են առաջին կուրսեցիները, որոնց 18 տարեկանը չի լրացել, որոնց գաղափարները, դիրքորոշումները ձևավորված չեն: ՈՒԽ-ի նախագահների միջև կարելի է նկատել ներքին պայքար, թե ով է ավելի լավ կուսակցականացնում ուսանողներին:

Հետաքրքիր փաստ կամ, ավելի ճիշտ, օրինաչափություն է նկատվել և նկատվում ՀՊՏՀ-ի ՈՒԽ-ում. անկուսակցական 3-4-րդ կուրսեցի չես հանդիպում ՈՒԽ-ում կամ հանդիպում ես հատուկենտ, իսկ դա, իհարկե, խոսում է ՈՒԽ-ի լճացման մասին, երբ անկուսակցականներն արհեստական կամ բնական ճանապարհով մեկուսացվում են ՈՒԽ-ի աշխատանքներից, և դաշտը մնում է «կտրիճներին :

Այս վիճակը բնորոշ է հիմնականում բոլոր պետական բուհերին, որտեղ խորը արմատներ են գցել կուսակցականացված ՈՒԽ-ները, որոնք և ժառանգաբար փոխանցվում են: Իսկ ի՞նչ են մտածում բուհերի ռեկտորատները, երբ այս ամենն իրականացվում է բացահայտ կերպով՝ օրը ցերեկով, մի՞թե անզոր են՝ պայքարելու այս ամենի դեմ: Մենք՝ ազատամիտ երիտասարդներս, չենք հանդուրժելու այս վիճակը և հետայսու հերթականությամբ մերկացնելու ենք բոլոր կուսակցականացված ՈՒԽ-ները:

Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, պայքարե՛ք ձեր և ձեր բուհի ապագայի համար...

Պետհամալսարանը պետք է կոշիկնե՞ր տրամադրի ուսանողուհիներին

«Համալսարանի տարածքում կատարվող շինարարությունը ինձ շատ-շատ խանգարում է: Առանց այն էլ խցանումների պատճառով հաճախ դասից ուշանում էի, հիմա էլ ստիպված եմ լինում շինարարությունը շրջանցել և ավելի եմ ուշանում դասից ,- պատմում է ԵՊՀ ուսանողուհի Արևիկ Չափարյանը:

Բայց հարցը միայն դասից ուշանալը չէ: «Անցյալ օրը պիտի ճանապարհն ասֆալտեին, և քարեր էին լցրել: Ուրիշ ճանապարհ չկար, ստիպված դրանց միջով անցա և կոշիկիս կրունկը կոտրվեց: Դժվարությամբ կրունկս գտա քարերի միջից և գնացի տուն, որ փոխեմ: Միայն վերջին դասաժամին կարողացա հասնել ,- շարունակում է Արևիկը:

Նա միակը չէ, ում խանգարում է շինարարությունը: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողուհի Մելանյան դասից չուշանալու համար փորձում է ավելի շուտ դուրս գալ տնից, սակայն երբեմն չի կարողանում ժամանակին հասնել: «Շինարարության տարածքում ցուցանակներ չկան, որ գոնե իմանանք, թե որ կողմով

կարող ենք համալսարան հասնել ,- բողոքում է նա:

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կարեն Գրիգորյանի հավաստմամբ՝ մինչև ասֆալտապատման աշխատանքների սկիզբը ցուցանակ կար, որտեղ նշված էր, թե ինչ է կառուցվում, ով է կառուցում, բայց ուղորդիչ ցուցանակներ չկային: «Համալսարանը խնդիրը ներկայացրել է քաղաքապետարան, պատասխանել են, թե քաղաքաշինական ծրագրեր են իրականացնում, ճանապարհ են սարքում քաղաքի համար, համալսարանի համար: Չենք բողոքում, որ ճանապարհ են սարքում, հարցը տեղաշարժման դժվարություններն են, պիտի համբերենք, ուրիշ ճար չկա ,- ասում է Կարեն Գրիգորյանը և ավելացնում, որ մինչ օրս, թեև ուսանողները բանավոր կերպով բողոքել են, սակայն գրավոր ոչ մի բողոք չի եղել, որ իրենք ներկայացնեն շինարարության համար պատասխանատու մարմիններին:

Քաղաքապետարանից տեղեկություն ստանալ չհաջողվեց, սակայն տարածքում շինարարություն իրականացնող վարպետները հավաստիացրին, որ շինարարությունը կավարտվի մինչև հոկտեմբերի 30-ը: «Ուսանողները թող շատ չբողոքեն, մենք գիշերցերեկ աշխատում ենք, որ մինչև ամսվա վերջ այս հատվածը շահագործման հանձնենք ,- հավաստիացրեց վարպետ Սամվելը և խորհուրդ տվեց մի քիչ էլ համբերել:

Համալսարանի ուսանողուհի Արաքսյան պատրաստ է համբերել: «Չնայած դժարություններին, հասկանում եմ, որ այս ամենը մեր համար է և շինարարության ավարտից հետո ավելի լավ կլինի ,-ասում է նա: Իսկ մեկ այլ ուսանողուհի կատակում է. «Համալսարանի ճանապարհին ակրոբատ ենք դարձել :

Մարի Կարաթորոսյան

100 ամյակ

Վազգեն Ա. Պալճյան Ամենայն Հայոց Հայրապետից

ՀՈ՞Ն, ՀԵՌՈՒՆ...

Հո՜ն, հեռո՜ւն, տուն մը ունինք մենք:

Մեզի համար ամէն ինչ է ան:

Ամբողջ աշխարհ մըն է կենդանի:

Ան քար է, լոյս եւ արիւն:

Ու տեսիլքին մէջ քարը դարձաւ տաճար, լոյսը՝ ծիածան, արիւնը՝ հոգի, իսկ ժամանակը՝ պատմութիւն:

Ու այսպէս ահա՜, Արարատեան Աշխարհը Հայոց մարմին առած՝ դարեր երազեց...

Քանի՜, քանի անգամներ ուզեցին անոր քարը փշրել:

Քանի՜, քանի անգամներ ուզեցին անոր լոյսը մարել:

Քանի՜, քանի անգամներ ուզեցին անոր արիւնը ցամքեցնել:

Ամէն անգամ, սակայն, Մեսրոպին տեսիլքը յաղթահարեց:

Ան եղաւ ե՛ւ քար, ե՛ւ լոյս, ե՛ւ արիւն, ու մեր տունը մնաց կանգուն, լուսաւոր ու կենդանի:

Մեր նախնիքներուն մնացած հսկայ ժառանգութիւն մըն է ասիկա, որուն մեծութիւնը ճանչնալու եւ չափելու անկարող է մեր սերունդը:

Ժառանգութիւն մը, զոր կրելու համար մեր ուսերը ե՛ւ տկար են, ե՛ւ անարժան...

Եւ սակայն, մեր սերունդին ալ վիճակուած է գէթ հպատակիլ անոր եւ խոնարհիլ գիտնալ անոր առաջ:

Մեր ժողովուրդի պատմութեան եւ մշակոյթին առաջ:

Մեր ցեղին բարոյականին եւ իտէալիզմին առաջ:

Ու այսօր, երբ մեր շուրջը ամէն ինչ խարխուլ է, անորոշ եւ երերուն, դաւանինք այդ արժէքները:

Ինչքան վտանգը մեծ ըլլայ, մենք, աւելի քան երբեք, հաւատանք մեր վերջնական յաղթանակին ու փրկութեան:

Ինչքան խաւար դառնայ աշխարհը, մենք աւելի մօտենանք Մեսրոպեան լուսեղէն տեսիլքին ու սրտանց ապրինք անոր բոլոր ստեղծագործութիւնները՝ մեր մշակոյթն ու մեր պատմութիւնը:

Ինչքան աւելի առատ հոսի մեր եղբայրներուն արիւնը, այնքան աւելի զօրացնենք մեր մկանները:

Զօրացնե՛նք, մանաւանդ, մեր երիտասարդութեան հայու գիտակցութիւնը: Այս ճամբուն վրայ բոլոր սրբազան պարտականութիւններ ունին, մանաւանդ հին սերունդը եւ մեր ազգային հաստատութիւնները:

Մեր նոր սերունդին հոգիին մէջ ալ ճառագայթ մը ցաթեցնենք Հայոց Աշխարհի Տեսիլքէն ու հայ հոգիներու իտէալիզմէն:

Միայն այսպիսով պիտի կարենանք կենդանի ու կորովի մնալ:

Ու պէտք է մնանք, մինչեւ մեր փակ բախտին դուռը բացուի: Որովհետեւ հո՞ն, հեռո՞ւն տուն մը ունինք, որ անձկալի մեզ կը սպասէ:

Հէ՞յ դո՛ւն, Հայոց Աշխարհ, մեր այս կորսուած անկիւնէն մեր ողջոյնը ընդունէ...

«Գալիքի Տեսիլքով հատորէն 1988, Ս. Էջմիածին

1941 թ. Պուքրէշ



Վիլյամ Սարոյան

Մենք այլևս կորուստներ չենք ունենալու: Մենք ՊԵՏՔ է շարունակվենք:

Մի' ամաչեք լինել բարի ու քնքուշ, բայց եթե երբևիցե ձեր կյանքի ճանապարհին սպանելու հերթը գա, սպանեցե'ք ու մի' զղջացեք:

Ատեցե'ք չարությունն ու ստորությունը, բայց ոչ չար ու ստոր մարդկանց:

Փնտրի'ր բարին ամենուր, ու թող նա լինի ազատ և աներկյուղ…

Ամեն ոք պետք է ընտանիք ունենա:

Ուր որ կերթաս, պոռա Հայաստա՜ն…

Սերը անմահ է, ատելությունը մահանում է ամեն վայրկյան:

Ես հավատում եմ մարդու բարությանը: Ատում եմ այն ուժերը, որ աշխատում են բնաջնջել մարդու ազնվությունը:

Հիշիր, որ ամեն մարդ քո նմանակն է:

Քո կյանքի ժամերը

Կյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ այդ քաղցր ժամերին ոչ քեզ, ոչ էլ կողքիդ ապրողներին չդիպչեն ապականությունն ու մահը: Ամենուրեք փնտրիր բարին ու հենց հայտնաբերես, հանիր լույս աշխարհ իր թաքստոցից, թող բարությունը լինի անկաշկանդ ու չամաչի ինքն իրենից: Աչքի լույսի պես պահիր, փայփայիր մարդկայնության ամենաչնչին նշույլներն անգամ, քանի որ դա է ընդդիմանում մահվանը, թեև անցավոր է: Ամեն ինչի մեջ գտիր լուսավորը, այն, ինչ չի կարող արատավորվել: Եթե մեկնումեկի սրտում առաքինությունը պահ է մտել ահով ու կսկիծով՝ արար աշխարհի ծաղր ու ծանակից մազապուրծ եղած, քաջալերիր նրան: Մի խաբվիր արտաքին տպավորությամբ, որովհետև դա վայել չէ պայծառատես աչք ու բարի սիրտ ունեցողին: Ոչ մեկին մի ենթարկվիր, բայց և ոչ մեկին էլ քեզ մի ենթարկիր: Հիշիր, որ ամեն մարդ քո նմանակն է: Ամեն մեկի մեղքը նաև քո մեղքն է… Մի' ամաչիր բարի ու քնքուշ լինել, բայց հենց որ կյանքիդ որևէ ժամին վրա հասնի սպանություն գործելու պահը, գործիր այդ սպանությունն ու մի զղջա:

Կյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես նրա անսահման լույսն ու խորհուրդը:

Մարդ կա, որ կծնվի երեխա, երեխա ալ կմնա: Քրիստոս ծնավ երեխա և երեխա մնաց: Քրիստոս միշտ Հայր Աստծուն կդիմե: Մարդիկ ալ կան, որ որբ կծնին, թեև մեծ գերդաստան կունենան: Ատոր վրա խաղ մունիմ:

Կսիրեմ անոնց, որ երեխա կծնվին...



Ռաֆայել Իսրայելյան

Ռ. Իսրայելյանի քաղակները բազմաժանր են ու բազմապիսի: Ստորև ներկայացնում ենք նրա՝ հանրությանը ավելի հայտնի կոթողները:

«Մայր Հայաստան արձան, «Սարդարապատի ճակատամարտը հուշահամալիրը, «Չարենցի կամար հուշակոթողը, «Հաղթանակ զբոսայգու մուտքի կամարը, «1918թ. Բաշ-Ապարանի հերոսամարտը հուշարձանը, «Մուսա-լեռան հերոսական ճակատամարտը հուշարձանը, «1920թ. Հաճընի հերոսամարտը հուշարձանը, «Հուշարձան II Համաշխարհային պատերազմում զոհված Կարբի գյուղի բնակիչներին , Հայաստանի ազգագրության թանգարանի շենքը, Ֆիզիկայի ինստիտուտի լաբորատոր մասնաշենքը, Նկարիչների միության շենքը, Աղբյուր-հուշարձան՝ ի նվեր Իտալիայի Կառառռ քույր-քաղաքին, «Առյուծ կոթող-ցուցանակը (Կոտայքի մարզ, դեպի Գեղարդ տանող ճանապարհ), «Արծիվ-շինարար կոթող-ցուցանակը (Երևանի հարավային մուտքի մոտ), «Վահագն-վիշապաքաղ կոթող-ցուցանակը, (Երևանի հյուսիսային մուտքի մոտ), Տուֆե նստարան, Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի բակ, Զարոբյան փ. 20

Վիկտոր Համբարձումյան

1934թ-ին Վիկտոր Համբարձումյանը ԵՊՀ-ում հիմնել է աստղաֆիզիկայի ամբիոնը եւ երկար տարիներ ղեկավարել այն: 1946թ-ին նրա անմիջական ղեկավարությամբ սկսվում է Բյուրականի աստղաֆիզիկական դիտարանի կառուցումը: 40-ականների վերջին նա հայտնագործում է նոր տիպի աստղային համակարգերի գաղափարը, համակարգեր, որոնք աստղառաջացման օջախներ են: Համբարձումյանը դրանք անվանում է աստղասփյուռներ եւ ապացուցում, որ աստեղերը շարունակում են առաջանալ ու ամենակարևորը՝ խմբերով:

Նորություններ

Երբ թուրքը լաց է լինում Ցիծեռնակաբերդում...

Լոնդոնում բնակվող թուրք գրող և Մերձավոր Արևելքի ազգային փոքրամասնությունների խնդրով զբաղվող Զիա Մերալը կոչ է անում հավաքել թուրքերի օգնությամբ Հայոց ցեղասպանությունից փրկված հայերի վկայությունները: «Turkish Daily News -ում հրապարակված հոդվածում Մերալը պատմում է, թե որքան է ցնցվել՝ այցելելով Երևանի Հայոց ցեղասպանության հուշահամալիրը: «Ես հստակ չեմ հիշում, թե երբ առաջին անգամ իմացա հայերի կոտորածի մասին, բայց հիշում եմ, թե ինչպես էի լալիս Երևանի հուշահամալիրի մոտ: Ես դողում էի՝ դիտելով լուսանկարներն ու լսելով աշխարհով մեկ սփռված հայերի պատմությունները: Հենց այդ պատճառով ես բացում եմ «Project Common Humanity web-ռեսուրսը , որտեղ կհրապարակվեն իմ հայտնաբերած պատմությունները: Դա իմ համեստ ներդրումը կլինի այն բանավեճում՝ եղե՞լ է, թե՞ չի եղել Հայոց ցեղասպանությունը ,- գրում է թուրք գրողը:

Ազնավուր...երկա'ր ապրիր

Լեգենդար ֆրանսահայ երգիչ Շառլ Ազնավուրը 2009թ. հունվարի 19-ին կստանա «Կյանքի ընթացքում ունեցած ձեռքբերումների համար «MIDEM -ի սահմանած մրցանակը: 43-րդ «MIDEM -ը՝ միջազգային երաժշտական տոնավաճառը, տեղի կունենա Կաննում 2009թ. հունվարի 18-21-ը: Շառլ Ազնավուրն ուշադրության կենտրոնում կլինի 2008թ. վերջին, երբ կթողարկի իր նոր՝ «Duos ալբոմը: «Duos -ը շանսոնյեի լավագույն երգերի հավաքածուն է՝ ձայնագրված զուգերգերի տեսքով ֆրանսիական և համաշխարհային մեծագույն աստղերի հետ:

Էգոյանին պարգևատրեցին մեծ մրցանակով

Համբուրգի կինոփառատոնում կայացել է կանադահայ կինոռեժիսոր Ատոմ Էգոյանի «Երկրպագություն ֆիլմի պրեմիերան: Ֆիլմի ցուցադրությունից առաջ Էգոյանը պարգևատրվել է «Դուգլաս-Սիրկ մրցանակով: Կինոփառատոնի մրցանակը Էգոյանին է հանձնել աշխարհահռչակ կինոռեժիսոր Վիմ Վենդերսը: Ֆիլմի համաշխարհային պրեմիերան Կաննի միջազգային փառատոնում էր, որի ժամանակ Էգոյանն արժանացավ էկումենիկ ժյուրիի մրցանակին:

Երբ կանանց ոտքերը աղետներ են գործում...

Ուգանդայի էթիկայի նախարար Նսաբա Բուտուրոն նոր հրաման է արձակել, ըստ որի՝ կանանց արգելվում է կարճ կիսաշրջազգեստներ կրել փողոցում, քանի որ դրանք շեղում են վարորդների ուշադրությունը և ավելացնում ավտոճանապարհային պատահարների թիվը: «Տղամարդկանց որոշ մասը թուլություն ունի կանացի գեղեցիկ ոտքերի նկատմամբ, իսկ դա հղի է անցանկալի հետևանքներով ,- ասել է նախարարը, ում նոր հրամանը, տեղացիների կարծիքով, միանգամայն զավեշտալի է:

Ուգանդացի կանայք արդեն բողոքի ալիք են բարձրացրել նոր հրամանի կապակցությամբ:

2010-ի Ֆուտբոլի աշխարհի առաջնության խորհրդանշանը (լոգոն)

2010 թվականին Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում անցկացվելիք ֆուտբոլի աշխարհի առաջնության խորհրդանիշ է ընտրվել Զակումի ընձառյուծը: Խորհրդանիշի ներկայացման արարողությունը կայացել է Հարավ-Աֆրիկյան Հանրապետության մայրաքաղաք Յոհաննեսբուրգում: ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքէջի հաղորդմամբ՝ ընձառյուծի անվան «Զ և «Ա տառերը Հարավային Աֆրիկայի հապավումն են, իսկ «կումի -ն աֆրիկյան մի շարք լեզուներով նշանակում է 10:

ԱՍՔ ՄԻԾՈՅԻ, ԾՊՌՕՏԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր երգի տեսահոլովակ գալիս է լրացնելու վերջինիս միտքը, հետևաբար պետք է լինի համապատասխան: Ուստի պատահական չէ, որ կապակցված միտք չարտահայտող «երգերի տեսահոլովակները ևս հաճախ անիմաստ են լինում: Բայց դա լավագույն դեպքում, քանզի քիչ չի պատահում, որ այդ տեսահոլովակները կրում են, մեղմ ասած, անպարկեշտ բնույթ: Ու դրանք վերջին շրջանում այնքան են շատացել, որ ակամայից հարց է առաջանում. «Յո՞ երթանք : «Դեպի Եվրոպա, դեպի Ամերիկա ,- կարող ենք լսել ի պատասխան: Բայց այդ դեպքում նշենք, որ նույնիսկ ԱՄՆ-ում Բրիթնի Սպիրսի «Toxic տեսահոլովակն արգելել էին ցուցադրել ցերեկային ժամերին: Մինչդեռ մեզ մոտ ցանկացած ժամի կարելի է տեսնել «Toxic -ային ու դեռ շատ ավելի անվայելուչ տեսահոլովակներ: Օրինակները բազմաթիվ են, սակայն անդրադառնանք առավել տարածվածներից մի քանիսին.

2005թ. Գրիգոր Աղախանյանն աղավաղում է «20 տարեկան սիրված երգը՝ այն «միաձուլելով ամերիկյան հանրահայտ մի ռեպի հետ ու համեմելով գռեհիկ արտահայտություններով: Տեսահոլովակն աչքի է ընկնում «լողափին հանգստացող աղջիկների բազմությամբ:

2006թ. նկարահանվում է «Հայք խմբի «Առանց սիրո տեսահոլովակը:

2007թ. հունվարին Անի Թովմասյանը՝ նույն ինքը Շպռօտը, հանդես է գալիս «Տին-տիրիմ անհասկանալի անունը կրող «երգով : Արդյունքում՝ մեզանում գործածվող «թևավոր խոսքերի շարքը հարստանում է ևս մեկ արտահայտությամբ՝ «Ես եմ քո մեղրը, արի ինձ կեր , իսկ տեսահոլովակն արժանանում է «նոր խոսք արվեստում , «մտքի համարձակ թռիչք ու նմանատիպ այլ գնահատականների:

2007թ. եթերում հայտնվում է Միշոյի «Քո համար «երգը ՝ իր տեսահոլովակի հետ միասին: Այստեղ ոչ միայն «երգիչը հանդես է գալիս երկու մերկ աղջիկների ընկերակցությամբ, այլև այդ կադրերն ընդմիջվում են այլ կադրերով, որոնցում Միշոն «երգում է եռագույնի ֆոնի վրա: Ըստ էության, պետական խորհրդանիշի անհարկի օգտագործումն օրենքի խախտում է, իսկ եռագույնը մեզ համար լոկ պետական դրոշ չէ. այն նախևառաջ ազգային պարծանք է: Բայց այս դեպքը ոչ միայն չգրավեց համապատասխան գերատեսչությունների ուշադրությունը, այլև արժանացավ հասարակության լայն զանգվածների խիստ բարյացակամ վերաբերմունքին: Ուստի պատահական չէ, որ «Քո համար -ից մի տարի անց Միշոն հանդես եկավ նմանատիպ մեկ այլ տեսահոլովակով: Բոլորովին վերջերս երևան եկած այս տեսահոլովակի հիմնական տարբերությունը «Քո համար -ից այն է, որ աղջիկների քանակն այստեղ ոչ թե երկուսն է, այլ շատ ավելին, իսկ խոսքերն ավելի անհեթեթ են: Իրենց անմակարդակ «երգերով ու դրանց հիման վրա նկարահանված ոչ պակաս անմակարդակ տեսահոլովակներով շարունակում են հանդես գալ նաև Միշոյի «թիմակիցները , Շպռօտը և մյուսները: Ու բնականաբար շարունակելու են. չէ՞ որ այդ «երգերը պատվավոր հորիզոնականներ են զբաղեցնում մրցաշքերթներում, իսկ տեսահոլովակներն ամեն օր ցուցադրվում են հեռուստաեթերով:



Այսպիսով, տեղական որոշ «արվեստագետներ իրենց ջանքերն ուղղել են հոգևոր արժեքների խեղաթյուրմանը: Իսկ մենք, խրախուսելով կամ անտարբերության մատնելով նրանց գործունեությունը, կամա թե ակամա նպաստում ենք, որ նմանատիպ «մշակույթը մեր հայրենիքում ծաղկում ապրի ու ինչ-որ տեղ մասնակից ենք դառնում ազգի դեգրադացիայի հանգեցնող մի գործընթացի: Այնինչ մեզնից պահանջվում է ընդամենը ոտքի կանգնել ու ոմանց վճռականորեն ասել «ոչ :

Մարիամ Կիրակոսյան

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏ
ԾՈ՞Ւ ԵՍ ՍԻՐԱՀԱՐՎՈՒՄ

1. Ժամադրության հրավիրող սիրային անստորագիր ուղերձ ես ստանում: Կգնա՞ս.

ա) այո

բ) կսպասես հաջորդ ուղերձին

գ) կգնաս նշված վայրն ու կթաքնվես, որ պարզես՝ ով է այդ երիտասարդը

2. Կհուզվե՞ս նոր ծանոթի հետ ռոմանտիկ առաջին ժամադրության ընթացքում.

ա) մի քիչ

բ) նման դատարկ բաներից չես հուզվում

գ) կնյարդայնանաս

3. Քո ծանոթը, ում ժամադրության հրավերը մերժել ես, անսպասելիորեն հրավիրում է քո սիրելի երգչի համերգին.

ա) ուրախությամբ կընդունես հրավերը

բ) կգնաս, բայց տոմսիդ համար ինքդ կվճարես

գ) քաղաքավարի կմերժես

4. Դու մինչև ականջներիդ ծայրը սիրահարվել ես, բայց հանկարծ իմանում ես, որ նա քեզ նման ծանոթ շատ աղջիկներ ունի: Ի՞նչ կանես.

ա) խիստ կհիասթափվես նրանից

բ) կփորձես պարզել՝ որքանով են լուրջ ձեր հարաբերությունները

գ) դու էլ շատ ընկերներ ձեռք կբերես

5. Ընկերուհիներիդ հետ պարասրահ ես գնում: Ի՞նչ կհագնես.

ա) ունեցածդ լավագույն հանդերձը

բ) առօրյա հագուստ

գ) պարելուն հարմար մի բան

6. Լողի մարզիչը քեզ առաջարկում է թռչել հինգ մետրանոց բարձրությունից: Կթռչե՞ս.

ա) այո՝ ապացուցելու համար, որ վախկոտ չես

բ) ոչ

գ) կսկսես մարզվել՝ թռչելով ավելի փոքր բարձրություններից

Այժմ ամփոփենք արդյունքները

	ա)	***բ)***	***գ)***
1.	0	2	1
2.	1	0	2
3.	2	1	0
4.	0	1	2
5.	0	2	1
6.	2	0	1

0 - 4 միավոր: Ցանկանում ես, որ քեզ միշտ հաճոյախոսություններ անեն ու սիրահարված հայացքով նայեն: Բայց դա շատ շուտով կարող է ձանձրացնել ոչ միայն քո երկրպագուին, այլև հենց քեզ:

5 - 9 միավոր: Արժանապատվություն ու հպարտություն ունես: Քո պահվածքով կարող ես շատ տղաների գլուխ պտտեցնել, բայց մի տարվիր քո սեփական անձով ու բարի խոսքերը մի խնայիր մտերիմներիդ համար:

10 - 12 միավոր: Սիրում ես վարակիչ ծիծաղել ու պայծառ ժպիտներ շռայլել աջուձախ: Կարող ես չնկատել, որ տղաներն օգտվում են քո թուլություններից ու սիրո մասին պարզապես ստում են:

ՈՒսանողական Հումոր

♥ Հայրիկն ուսանող որդուն հարցնում է.
-Ինչպե՞ս անցավ քննությունդ, զեկուցի՛ր:
-Քննությունն անցավ փայլուն, դասախոսները հիացմունքի մեջ են, խնդրում են՝ նորից հանձնեմ:

♥ Ուսանողի ծնողները հյուր են գնում ուսանողին հանրակացարանում: Առավոտ շուտ թակում են սենյակի դուռը. քնկոտ ձայնը հարցնում է.
-Ո՞վ է:
-Կարապետը այստե՞ղ է ապրում:
-Այստե~ղ, այստե~ղ... դուք նրան դռան մոտ թողեք, հագնվեմ, ներս կբերեմ:

♥ Ռեստորանում ուսանողը պատվիրում է.
-Բերեք ինձ, խնդրեմ, մեկ բաժակ ջուր և մի կտոր հաց...
Մատուցողը զարմանում է.
-Միայն այսքա՞նը:
-Է~, դե ծախսել…ծախսել. լավ, մի դույլ ջուր, մի բոքոն հաց:

♥ Մի մարդակեր ինչ-որ բան է տանում: Հանդիպում է ընկերոջը.
-Էս ի՞նչ ես տանում:
-Ուսանող:
-Ի՞նչ, ուսանո՞ղ, թող դրան, ես երեկ մի ուսանող էի եփում, և մինչ ջուրը կեռար, նա ամբողջ կարտոֆիլը կերավ:

♥ Ընդունելության քննության ժամանակ դիմորդին հարցնում են.
-Դուք Թումանյանին գիտե՞ք:
-Ոչ:
-Լավ... Իսահակյանի՞ն, Չարենցի՞ն, Շիրազի՞ն:
-Ոչ, չգիտեմ:
-Իսկ Շիրվանզադեի՞ն... Սևա՞կ... ծանո՞թ եք:
-Ոչ:
-Ազատ եք:
Լսարանի մոտ դիմորդին հարցնում են.
-Դե ի՞նչ, ընդունվեցի՞ր:
-Ո՛չ, այստեղ ամեն ինչ ծանոթով է. ես, ինչպես պարզվեց, ոչ մեկին չգիտեմ:

♥ Դեկանը հարցնում է դիմորդին.
-Ինչու՞ դուք որոշեցիք ընդունվել հենց այս համալսարանը և հենց այս ֆակուլտետը:
-Ի՞նչ տարօրինակ հարց ես տալիս... հայրի՛կ:



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողի Ձայն -ը անկախ ուսանողական պարբերաթերթ է: Այն արտահայտում է հայաստանյան բոլոր բուհերում ուսումնառող երիտասարդների կարծիքը՝ անկախ նրանց կուսակցական ու գաղափարական պատկանելությունից: Պարբերաթերթում հոդվածներ են գրում նաև շրջանավարտները՝ առանց տարիքային սահմանափակման: Թերթի խմբագրակազմը պատասխանատվություն չի կրում առանձին հոդվածների բովանդակության համար, եթե, իհարկե, այն չի հակասում խմբագրակազմի որդեգրած բարոյական ուղղվածությանն ու չափանիշերին, ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրական ակտերին: Մեր հոդվածագրերը զերծ են մնում անձնական վիրավորանքներով համեմված հրապարակումներից:

Մեր թերթը ամբիոն է՝ ոտնահարված իրավունքներով ուսանողներին: Մենք պաշտպանում ենք ուսանողի արդար իրավունքը, փաստեր չենք աղավաղում, չենք կեղծում, մենք ուսանողի խոսափողն ենք: Մեզ հետ կարող եք համագործակցել և նամակցել՝ գրելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝

usanoghidzayn@rambler.ru

կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝

010-521202

կամ պարզապես այցելել մեր գրասենյակ

(հասցե՝ Հանրապետության 30, «Սիմոն Վրացյան կենտրոն):